



ՄԱՆԿԵՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

Ա.Զ.Գ.Ա.ՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՄԱՍԻՍ ԿԵ ՀՐԱՏԱՐԱԿՈՒ Է Կ. ՊՈՂԻՍ, ամեն ամսոյ 1ին և 15ին:
Հասցէ՝ Կ. Պոլիս, Ղալաթիա Նորտուռնկեան խան:
Ձեռքէ կը ծախուի հատը 40 փարսյ:

Բաժանորդագին

Պոլիս, տարեկան

Գաւառները,

Օտար երկիրք,

մէկ մէծիտ:

մէկ քառորդ ոսկի:

Վեց ֆրանք:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, 1 ՀՈԿՏԵՄԲԵՐ

ՄԵՂԱՅ ՏԵՐ

(ՆՈՐԱՎԷՊ)

Ա.

Առաւօտեան ժամերգութիւնը նոր կ'սկսէր, մթութեան մէջ կորսուած դեկտեմբերի առաւօտ մը, ցուրտ ու խոնաւ. կոշնակը օդին ու բուքին մէջ կ'արձակէր իր ընդհատեալ վայելչը, մինչդեռ թափուր եկեղեցին պանդուխտ քահանային ձայնովը կ'արթնար, կը սարսուար իր քարակոյս պատերուն ու կամարներուն մէջ:
Տէրաէջը կ'երկնցնէր իր աղօթքը, ըստ պատելով բարեպաշտներուն որք չէին գար, վասնզի ո՞վ կուգար եկեղեցի, ձմեռ ու լուր օր մը, այս չի լուսցող առաւօտով:

Քահանան շուրջաւոր ուսին իր ժամերգութիւնը կը շարունակէր.

Տէր զի բազում եղեն մեղք իմ և բազում անօրէնութիւնք իմ.

Խուլ ու տարտամ ձայնով մը որ տիրող կէս մթութեան կը յարմարէր, անտարբեր իր շուրջի միայնութեան և անզգայ ձայնադրի մը պէս արտասանելով՝ աղօթքին տունըրը. իրեն համար քսան տարուան սովորութիւն մը:

Յետոյ երկրորդ ստուեր մը տեսնուեցաւ իր քովը. լուսարարն էր, այս որմերուն պահապանը, անոնց պէս ամուր իր անտանելի շաշտօնին մէջ, սիրելով այս ստուերները. այս լքումը և կամարներէն կախուած, կամ սրբոց պատկերներուն առջեւ հաստատուած կանթեղներն որք իր հիւանդագին զաւակներն էին գրեթէ, փութալով անոնց քով, մէկէն միւսին, անոնց շարունակ սպսուելու մօտ կեանքը արժարծելով:

Քիչ քիչ մէկ երկու հոգի եւս երեւցան, ժամկոչը, յետոյ մուրացիկ ծերուկ մը՝ իր փայտէ գաւազանին կռթնած. ու յետոյ երկու պանդուխտ որմնադիրներ, հազիւ քուններնուն արթնցած: Հիմայ առաւօտը կը ճշդուէր. կանուխ գործի գացող բանուորներ կուգային խաչ մը հանելու դրան մօտ և յաջողութիւն խնդրելու, ժամուն սովորական եկողներն ասոնք:

Բ.

Սարրաֆը ուշ եկաւ եկեղեցի այն առտու, Առաւօտ լուսոյին կէսին միայն հասաւ, ինքն որ ամեն օր զայն ծայրէ ծայր ըսելուն կը պարծենար:

Դուրսը տիրող ցուրտին հակառակ, քրտնաթոր մտաւ ներս, ծանրաշարժ ու պարարտ մարմնոյն բեռանը տակ շնչապառ. երեսը խաչակնքեց, ծնրադրեց, ֆէսը վար առած, ցոյց տալով իւզոտ ու

հերաթափ գանկ մը, յետոյ բարձրաձայն հառաչանք մը ելաւ կուրծքին խորէն, խորէն .

—Մեղայ՛ Տէր :

Երբեք մեղայ բառը այսքան ստոյգ անձկութեամբ, այսքան անկեղծ ապաշաւի մը արտայայտութեան ձեւով լսուած չէր :

Դասին մէջ չոքած սարրաֆին կը որ մարմինը, ծռած գլուխը, կիսախաւի աչքերը, ողորմելի ու գթութեան արժանի պատկեր մը կը ձեւացնէին աստուածային զայրոյթին տրամադրութեան տակ դէրուած, և ինքն յանցանացը մեծութեանը չափ այսպէս անկեղծ զղջումի մը գալով միայն թողութիւն առնուլ կ'ակնկալէր կարծես, երբ հետզհետէ կը կրկնէր, մարող, սպառնող ձայնով մը, առանց քաշուելու գինքը լսողներէն .

—Մեղայ՛ Տէր, մեղայ՛ Տէր :

Յետոյ թեթեւցած, ոտքի ելաւ ու իր հաստ ձայնը՝ տէրտէրին ձայնին միացաւ ու լուռ եկեղեցին կ'ապշէր, կը խռովէր, ունկնդրելով այս մարդուն :

Ինքը՝ իր տանը մէջ ըլլալ կը թուէր . դասը, գաւիթը, խորանը բոլորովին իրն էին անշուշտ, ինք կ'ըսէր աղօթքը միայնակ քահանայէն առաջ, բառերը հատիկ հատիկ, ամեն պարբերութեան նշանակութիւնն ու սրբութիւնը շեշտելով պահ մը կը յոգնէր, շունչ առնելու կ'ստիպուէր, ու վայրկեան մը վերջը նորէն կ'սկսէր, ընդմիջելով քահանային անորոշ մոմունջը և ծուռ ծուռ նայելով անոր երեսը . երբ սխալ մը սպրդէր կամ վարանում մը տեսնէր նոր տուն մը սկսելու պտեն :

Վայրկեան մը նորէն կը մասնաւորուէր իր աղօթքը, անհամար ծնրադրութիւններով խառնուած, համբուրելով գետնին ազտն ու փոշին ու լալագին և սրտաշարժ ձայնով մը վերադառնալով իր անձին .

—Մեղայ՛ Տէր :

Գ.

Մարտիրոս ազան այսպէս էր ամեն առտու, անպակաս եկեղեցիէն, իր ներկայութեամբը ապահովելով եկեղեցւոյն բոլոր ծէսն ու արարողութեանց կանոնաւորութիւնը, և ոչ մէկուն փախուստի ճամբայ չի ձգելով շարականներէն բառ մը պակաս կարդալու համար :

Քահանան այս աշխարհականին բարեպաշտութենէն կը դողար . քարոզիչն ու թաղական խորհուրդը կ'ակնածէին իրմէ և գիւղացին կը մեծարէր այս հաւատացեալ Աղան : որ իր բոլոր դրամին հակառակ աղքատի մը պէս խոնարհ ու աստուածափախ կը թուէր :

Պոլիս իր խանութին մէջ Մարտիրոս աղա մեծագոր մարդ մըն էր : Հայր ու մայր չունէր . ի փոխարէն հօրեղբայրներու ու հօրեղբոր որդիներու անհատնում շարք մը որք փոխն ի փոխը կը գային իր քով սովորելու դրամ չահելու արհեստը, յաճախողներու հետ վարուելու կերպերը, բայց գիշերները տունը սարրաֆին հետ եկեղեցի կենալը աչք առնելով : Այսպէս անոր մէկ մէկ մանրանկարները կը գառնային, Աստուածասիրութիւնը Դրամասիրութեան հետ հաշտեցնելու գաղտնիքը գտնելով :

Բայց անոնցմէ ոչ մին Աղային հարըստութիւնը ունենալու հնարքը կը տեսնէր :

Իրենց ժառանգական վաշխառուի բոլոր ճարտարութեամբը, ստակ փոխ տալու ձեւով աշխարհ կողոտելու բոլոր խորամանկութեամբը, ոչ, այդ հարստութեան չէին կրցած տիրանալ, և ինքնիրենին, երբ մ. ծառորնուն քով կեզմաւորութիւն ընելէ ու սպասաւորի դերք մը ունենալէ, առաւելացած, բերանին բանային, կը հասկըցուէր որ իրենց խեղացի ազգականն ինչ պիտի գէպքերէ կրցած էր օգուտ քաղել :

Դ.

Հայրենիքէն գրեթէ ընտրիկ եկաւ Պոլիս, նիհար ու վատոյժ պատանի որ խաներու, քարուկի՛ր սենեակներու խոնաւութեան մէջ ծառայութեամբ հաւաքած հինգ հարիւր զրուշով բացաւ իր սարրաֆի քոյրը, ճշմարիտ տօլապ մը զոր մինչեւ այն օրն ոչ ոք իրեն չափ վարպետութեամբ դարձուցած էր : Իր հայրենի քաղքին մէջ զոր Մարտիրոս Բերեքը կը կոչէր, տիրացութիւն ըրած ու ժամասիրութիւն ժառանգած էր աղկէ :

Իր աղքատութեան, սրբութեան բոլոր թշուառութիւնները տիրացուի զգեստը հազնելով կը մոռնար, և Աստուծոյ առջեւ, Աստուծոյ տան մէջ, իր անկեալ դիր-

քէն կը բարձրանար՝ յանկարծ ուրիշներու հաւասար ըլլալու, և իր ջերմեռանդութեամբը զանոնք գերազանցելու չափ: — Եւ ի՞նչպէս չսիրէր եկեղեցին ուր՝ ո՛չ հարուստ ըլլալու ոչ բազմաթիւ ըլլալու պէտք կար Աստուծոյ աչքին: Այսպէս երջանիկ ապրեցաւ քանի մը տարի. մտածեց որ երկնից թագաւորութիւնը տնանկաց յատկացեալ է ու միտթարուեցաւ իր ներկայ չքաւորութենէն: — Բայց երբ տասն և ութ տարին թեւակոխեց, բռնի Պոլիս զրկեցին զինքը Ժուժ ըլլալու համար, իրեն թէ աղքատ ըլլալուն համար մարդ եղած չըլլար մինչեւ այդ ժամուն:

Իր տաժանելի ուղեւորութեան միջոցին, յետոյ շոգեհաւին մէջ և մանաւանդ Պոլսոյ մէջ, իր համոզումները, սփոփանքները անբաւական մնացին:

Ո՛չ, այս մայրաքաղաքը երբեք չէր նմաներ բնաւ. Ակնայ տնակներուն երգիքը, գիւղացւոց շալվարը, կանանց աղտոտ լաջակը չտեսաւ հոս. նոր աշխարհ մը՝ նոր գաղափարներ արթնցուց. փոխելի պէտքը դրամի պէտքը ցուցուց, իր բարեպաշտութիւնն որ մինչեւ այն ատեն անշահատէր էր, պահանջող, բռնի բերան դարձաւ:

Մայր եկեղեցւոյ մէկ տնկիւնին մէջ քաշուած, անհատնում ազօթքներու ու շարականներու քաղուածքով ստակ և դարձեալ ստակ ուզեց՝ Աստուծոյ մէջ, և իր աշխատութեան փոխարէն առած չնչին գումարներն որ զինքը կը շլացնէին, աստուածային պարգեւներ կը համարէր և իր ազօթներուն վարձատրութիւնը:

Այսպէս իր առեւտուրն աստուածասիրութեան հետ խառնուած մնաց. այն բոլոր տոբիթներն ուսկից դրամ չահելու կարելիութիւնը նշմարեց, իր օգտին համար Աստուծոյ կողմէ յատկապէս կարգադրուած նկատեց ու բան մը չհարցուց ա՛յ իր խղճին: Աստուած՝ իր ըրածը չէ՞ր դիտեր միթէ:

Ե

Անգամ մը միայն տարակուսեցաւ, վարանում մը զգաց: Անոր բարեպաշտ մարդու համբաւէն խաբուած, իր մահամերձ բարեկամներէն մին՝ մեծ, խիստ մեծ, իր չի տեսածին չափ մեծ դումար մը աւանդ յանձնեց իրեն, մահուընէն վերջը այդ

դումարը ազգին ու իր ազգականներուն մէջ բաժնելու խնդիրքով. ու Մարտիրոս աղա նախ չի հաւատաց այս անակնկալ վստահութեան, հիւանդին անկողնին քով նստած, սենեակին դուռը գոց, նախ անդ խմորերի մարմաջ մը զգաց այդ գումարը տեսնելով զոր հիւանդը փոքրիկ սրնառու կէ մը կը հանէր, յետոյ հիւանդը հոն խղդեղու և ստակներն յափշտակելով փախչելու գաղափար մը ունեցաւ, յիմարի գաղափար մը. բայց այս փորձութեանց դիմադրեց: Ի՛նչ հարկ անոնց. միթէ Աստուած իր դէմը հանած չէ՞ր այս հիւանդը. ու Աստուծոյ թողուց՝ որ իր ուզածին պէս տնօրինէ ամեն ինչ: — Մարտիրոս աղա նախ դիմադրեց, շուգեց ընդունիլ այս աւանդը, ցած ձայնով, վախճալով որ դրան մօտ սպասող մէկը չըլլար ու իմանար այս աւանդի խնդիրն. յետոյ քիչ քիչ սկստացաւ, աւանդին պայմանները հարցուց. նախ է՛ն դիտարորդ, սուկոս պիտի տա՞ր. ոչ, ըսաւ հիւանդը, այն ատեն ա՛յ անձնատուր եղաւ, ստացաւ աւանդը, և Աստուածաշունչէն հատուածներ բերաւ մահամերձին ազգասիրութիւնը դուրսու համար:

Հիւանդը մեռաւ և յուղարկաւորներուն մէջ Մարտիրոս աղա իր արցունքներով, անկեղծ ու անսահման կսկիծով մը ննջեցեալին ամենէն սրտակից բարեկամը համարուեցաւ:

Յուղարկաւորութեան տեւած բոլոր միջոցին բոլոր ճամբուն երկայնութեամբը այս մեռած մտերմին վրայ խօսեցաւ, անոր բարեմասնութիւնները, պարկեշտութիւնը գովեց, անոր կեանքէն մասնաւոր դէպքեր պատմեց և լացաւ, մինչդեռ ուրիշներ, դադաղին ընկերանալով հանդերձ իրենց +—մե—ն, +մեշէմեշէն, բխցալէն խօսքերը կ'ընէին. Մարտիրոս աղա զայրացաւ ու իրրեւ թէ ինքն ըլլար այս անձա՛ն խօսակցութիւնն ընող, կսկծալի ձայնով մը գոչեց.

—Մեղա՛յ Տէր:

Մարդիկը լռեցին. վայրկեան մը, քանի մը քայլ ալ ըրին լռութեամբ, յետոյ մին, պատմայի վաճառական մը, շարունակեց իր խօսքը.

—Աճէ՛ մտերուն պէրաթները ձեռքէ հանելու է:

2

Մարտիրոս ազա անկէ վերջը իր բարե-
րարը նկատեց ննջեցեալը. թող շի տուաւ
որ մէկը գէշ ըսէ անոր վրայ. միթէ այս
մեծ հարստութիւնը անոր չէ՞ր պարտեր.
ո՛չ, ապերախտ մարդ չէր. յետոյ այդ ա-
ւանդը իւրացնելուն համար խորհեցաւ ա-
միսներով. նախ ըսաւ որ իրաւունք չու-
նէր ուրիշին ինչքը գողնալու. վերջը ինքն
իրեն հարցուց թէ ինչո՞ւ Աստուած իրեն
յանձնել տուաւ այդ աւանդը և ոչ ուրի-
շի մը. այս հարցումը իր տարակոյսները
վանեց. Աստուած այս առիթը կը ներկա-
յացնէր իրեն հարստանալու համար, և
ինքն իբրեւ խեղացի մարդ առիթէն օ-
գուտ կը քաղէր, մինչդեռ անխելք մը այդ
բանը չի պիտի մտածէր. այսպէս բացա-
տրեց Աստուծոյ կամքն և ճշմարիտ գոհու-
նակութեամբ մը աւելցուց.

— Կամք Տեառն օրհնեալ եղիցի:

Անդին ննջեցեալին ազգականները կա-
րօտութեան, չքաւորութեան մէջ կը մնա-
յին, անոր այրին Մարտիրոս աղային կը
դիմէր պատիկ օգնութիւն մը հայցելու
համար, իբրեւ իր ամուսնոյն սրտակից
բարեկամին.

Մարտիրոս ազա չզլացաւ այդ օգնու-
թիւնը, բայց այս դիմումը իր տարակոյս-
ները նորէն արթնցուց. սրահ մը խորհե-
ցաւ որ ըրածը ճշմարիտ գողութիւն մըն
էր. բայց ո՞ր մեղքը թողութիւն չ'ստա-
նար եթէ մարդս մեղայի գայ, ու այս յոյ-
սով, սարբափը թախանձագին ներում մը
խնդրեց.

— Մեղայ՛ Տէր:

Պահ մըն ալ ըսաւ որ ազգականներուն
դրամը տայ բայց ազգին դրամը պահէ.
Ի՞նչ է վերջապէս ազգին դրամը. չէ՞ մի
որ ուրիշ մը պիտի ուտէր:

Այս վարանումներով կը պահէր, այ-
սինքն կը գործածէր ստակն որ իր ճար-
պիկ ձեռքերուն մէջ արդիւնաբեր կը
դառնար, բարեբաղդ գէպքերով կը կրկնա-
պատկուէր, այնքան որ այս յաջողութիւնն
իր գողութեան արդարացումը կ'ըլլար և
իր զղման ընդունելի եղած ըլլալուն ա-
պացոյց գ'ընում մը զոր սովոր էր աւելայտ-
նելու ամեն առթիւ, խորունկ հաւատքի
ձայնով մը.

— Մեղայ՛ Տէր:

ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱՊ

ԱՆՏԵՂԻ ԿԱՏԱԿ

ՀԱՅԻ «ԵՍ»Ի ՎՐԱՅ

Երէկ երեկոյ (սեպտեմբեր 22) տուան
ինձ Ծաղիկ շաբաթաթերթի 2 թիւը, մի
բաւական երկար գրութիւն կարդա-
լու նորա մէջ Հայի «Ես»ի վրայ: Այդ
գրութիւնը որովհետեւ իմ հասցէիս էր
ուղուած, ուստի ահամայ «սատաս-
խան»(1) պիտի նկատէի Հայի «Ես»ի մա-
սին Մառի մէջ իմ արած մի քանի դիտո-
ղութեանց, մինչդեռ յիշեալ գրութիւնը
մինչեւ վերջը աչքէ անցնելուց յետոյ,
զարմացմամբ տեսայ, որ նորա մէջ ոչինչ
սատասխան չկայ, որ շօշափէր առածե-
րիս հոգին և իմաստը: Եւ յիշաւ, ես
խօսած էի յատկապէս Հայի «Ես»ի վրայ,
իսկ յիշեալ գրութեան յարդոյ հեղինակը
կը խօսէ այն վերացական «Ես»ի վրայ, որի
մասին գաղափար ունէ՛ տմեն մի դպրոցա-
կան աշակերտ եւս, ձեռքի տակ ունենա-
նալով միշտ գէթ նախակրթարանների հա-
մար յօրինուած Հոգեբանութեան ձեռ-
նարկները: Հէնց առանց այդ ձեռնարկ-
ների իսկ ո՞վ չգիտէ արդեօք թէ ե՞րբ
մարդկային բնական և ընդամեն յատկու-
թիւններից մինն է, որ ինքնապահպա-
նութեան բնազդովից յառաջ դալով հաս-
նում է անհոգիան կամ «բոյն»-ութեան փոր-
ցութեան, նորա պէս պէս մանրամասնու-
թեանց մէջ: Ո՞վ չգիտէ արդեօք որ ա-
ռանց այդ գիտակցութեան Մարդ ա-
ստուած արարածը ուրիշ բան չէր լինիլ ե-
թէ ոչ խոտի կամ ծառի նման բնութեան
մի արտադրութիւն: Ո՞վ չգիտէ որ այդ
գիտակցական էան է, որով տարբերվում
են մարդիկ անասուններից, որոնց մէջ
այդ ե՞րբ մնացած է մեծ մասամբ սոսկ
ինքնապահպանութեան բնազդովի աստի-
ճանի վրայ: Ո՞վ չգիտէ վերջապէս թէ ե՞րբ
մարդկանց մէջ կարող է դանազան ձեւեր

(1) Այդ «սատասխանի» մէջ յօդուա-
ծագիրը Մառի անունը չաւալով, «թերթ
մը» կ'ստէ սոսկ. այսչափ էլ խնդրած
տղու ձեւով խօսելը չէ՞ որ Հայի ես է՛ն
փանաքի տեսակը միայն ցոյց կ'տայ...
Ահա՛ մի ապացոյց նոյն իսկ ընդդիմախօսի
կողմից, էլ ինչո՞ւ հեռու գնալ...

և զարդացումներ ունենալ, պէս պէս բնոյթ և յատկութիւններ երեւան բերել: Բայց ի՞նչ պէտք և ի՞նչ պատեհութիւն, սիրելի պարոն, եւի վրայ այսպիսի վերայական տեսութիւններ և դատողութիւններ յառաջ բերելու. ո՞վ չգիտէ այդ ամենը, ո՞ր դպրոցական աշակերտը... մինչդեռ ուրիշ բան էր իմ ասածը և կը յուսամ թէ խիստ պարզ բան, այն է թէ՛ հայի «ես»ը մարդկային եւի այնչափ նախնական և սահմանափակ դարգացման աստիճանի վրայ է մնացած, որ այսչափ հազար տարիներ դեռ չէ հասած ընդհանուր եւի և ընդհանուր շահերի այն գիտակցութեան, որ յատուկ է միայն յառաջդիմաստէր և զարգացող ազգերին, այլ մեր եւը մնացած է անհատական նեղ գիտակցութեան մէջ, այնչափ նեղ, որ միշտ մնասած է և պիտի մնասէ մեր հասարակային ամեն ձեռնարկութեանց յաջող ընթացքին, — մեր մտաւոր և բարոյական յառաջդիմութեան գործին: Միթէ՞ դեռ կը կասկածիք սորա մէջ, միթէ՞ դեռ նոր օրինակներ կ'ուզէք. լաւ, ուրեմն նորէն օրինակներով խօսինք:

* *

Թերթած կա՞ք մեր ընկերութեանց և ժողովների ատենադրութիւնները. ներկայ գտնուած էք կամ քննական ուշադրութեամբ լսած այդ ժողովների մէջ տեղի ունեցած վիճարանութեանց և ասարկութիւններին. ի՞նչ կը տեսնէք միշտ նոցա մէջ, — անմերձանալի պոռոտախօսութիւններ և խժժանք. ո՛չ խնդրի բուն էութեան և հոգու վրայ այլ սոսկ Պօղոսի արած առաջարկութիւնը ջախջախելու համար. և ո՛չ այն պատճառաւ որ այդ առաջարկութիւնը մնաս է կամ օգուտ ընդհանուրին, այլ գլխաւորապէս նորա համար, որ այդ առաջարկը հրապարակ հանողը Պօղոսն է, այլ ո՛չ ինքը, իր շեղ եւը: Եւ որովհետեւ այդ անիծեալ շեղ եւը բուն դրած է և՛ Պօղոսի, և՛ Պետրոսի, և՛ Կիրակոսի մէջ, ուստի այս օր Պետրոսը կը աքնէ իր եւը գոհացնելու, վաղը Պօղոսը այսօր Կիրակոսը կը ձգտի Մարկոսի եւը իր եւին ենթարկելու, վաղը Մարկոսը Կիրակոսին և այսպիսով ամիս ամին կը յաջորդէ, տարին տարին, բայց ընդհանուր գործը մի քայլ անգամ յառաջ չի գնալ և

կը մնայ գէթ ատենադրութեանց մէջ արձանագրուած կամ խալառ Լեւոյ գետի անդունդը գլորուած:

Հեռեւած կա՞ք մեր ազգային թերթերի մէջ շատ անգամ յարուցուած կենսական հարցերին. ի՞նչպէս են ընդունուած և ի՞նչպէս վիճարանուած նոքա: Այս ինչ խնդիրը յարուցանողը դիցուք թէ Յարութիւնը եղաւ, որ խմբագրի կամ գրագէտի անուն կը կրէ. ի՞նչ կ'անեն միւս գրագէտները. նոքա կամ կը լռեն կամ դէմ կը խօսին. ի՞նչու. որովհետեւ այդ խնդրի նախաձեռնութիւնը իր վրան առնողը Յարութիւնը եղաւ, այլ ո՛չ Գրիգորը կամ Կարապետը. Հարցը կը մեռնի. կ'անցնեն մի քանի ամիսներ, մէկ էլ տեսար նոյն հարցի պաշտպան կը կանգնէ նոյն իսկ այն մարդը, որ առաջ նորա դէմ խօսած էր. ի՞նչպէս կը լինի որ հիմայ նա ուրիշ կերպ կը խօսէ. շատ հասկանալի է. որովհետեւ առաջ խօսողը Յարութիւնի եւն էր, այլ ո՛չ Գրիգորի կամ Կարապետի. Միթէ պէ՞տք կայ, սիրելի պարոն, այսպիսի օրինակներ ներկայացնելու, երբ մեր ամենօրեայ կեանքը լիքն է նոցանով. ասացէ՛ք խնդրեմ, նոյնն է արդեօք և օտար ազգաց մէջ եւս չեմ ասում մեծ ազգաց, այլ խիստ փոքր, այլ զարգացմամբ և խելքով մեզնից շատ վար կանգնող ազգերի մէջ իսկ: Միթէ չգիտէ՞ք դուք, որ ելեր էք ու մարդկային ընդհանուր եւի վերացական դատողութիւններ էք անում: Բայց շիտակը ասեմ՝ կը վախենամ ձեր տուած օրինակից. կը վախենամ որ վաղը մէկ ուրիշն էլ չենէ անտեղի յօդուածներ գրելու, շեղուելով խնդրի բուն ուղղութիւնից և ո՞վ գիտէ ո՞ր բառը խժժեցնով կամ ո՞ր խմատով խաբելով, ուստի պարտք կը համարեմ հազարաւոր օրինակներից մի քանինները եւս անտեսանք անել:

Գտնուած էք անշուշտ չորս-հինգ հայ ընկերների շրջանում և տաք տաք վիճաբանած որ և է խնդրի վրայ. մէկ ուրիշ անգամ էլ գտնուած էք դուցէ օտարազգի բարեկամների մի ուրիշ խմբի մէջ, ուր գտնուած են եւս մի երկու հայ ընկերներ: Ուշադրութիւն դարձրած էք արդեօք թէ հայերը միմեանց մէջ խօսած ժամանակ մի ժամուայ մէջ քանի՞ հարիւր անգամ եւ բառը կը գործածեն, մինչդեռ

նոյն հայերը օտարաց մէջ գտնուելիս ո՛չ միայն իրանց եւր կը մոռանան, այլ նորա տեղ հայաստանում ուտելու չափ անոյշ ասոր-ժակով «նուսաստ», «ձեր խոնարհ ծառայ» բառերը դործ կ'ածեն...

Փորձած կա՞ք արդեօք երբ մէկ կամ մի քանի հայ «գաղափարակից» բարեկամներին առաջ ձեր որ և է մի կարծիքը կը յայտնէք, մէջ բերելով «անգգուշարար» ձեր անցեալից ունեցած որ և է փորձառութիւնը: Հերիք է որ ձեր մասին մի խօսք ասէք. մէկ էլ տեսար, փոխանակ խնդրի բուն էութեան վրայ խօսելու ամէն մէկը սկսեց իր կեանքի տոպրակը բանալու և այնչափ իր վրայ խօսեց, որ դուք էլ ձանձրացած, ուրիշներն էլ ձանձրացած, խնդիրն էլ մոռացուեցաւ: Միթէ չէ՞ք դիտած դուք մեր կեանքի այս հանապազօրեայ երեւոյթները: Հապա առանց կեանքը սերտելու, ի՞նչպէս էք դրիչ տոնում յօդուած գրելու, այն եւս «ուսումնական» տեսակէտից, երբ ոչ ոք չէ ուղում իմանալ թէ դո՛ւք շատ ուսում ունէք թէ մի ուրիշը...

Թողնենք մեր ներկան, հապա մոռցա՞ք մեր պատմութիւնը: Հապա մոռցա՞ք Մովսէս Խորենացին, որին հիմայ «հայր ամենայն պատմագրաց» ենք անուանում: չէ՞ք յիշում թէ ի՞նչ արին նորա ոսկորներն անգամ և ի՞նչ հալածանքների ենթարկեցին նորան իր կենդանութեան ժամանակ Ջորջոֆ, Բելեմիէ և էլ չգիտեմ թէ ի՞նչ տեսակ մարդասպա կախարդի հանգամանքներ վերագրելով նորան: Այսչափ դարեր են անցած այն օրից այս օր. միթէ չա՞տ ենք փոխուած. չէ՞ որ հիմայ էլ ամենայն սիրով պատրաստ ենք նոյն անունները տալ հէնց 70 տարեկան մի մեծ հեղինակին, եթէ նա համարձակի ամեն մի չնչին արարածի եւր չընդունու...:

Այս իմաստով Միւլի մէջ իմ արած մի քանի դիտողութեանց Մինչդեռ ի՞նչ պատասխան էք ա լիս դուք. թէ՛ եւր մարդկային բնաւորութեան անբաժան մի մասն է, որն մի հա տրակութեան և ազգի զարգացման մըում տփույ մեծ ուժը կը լինի, եթէ լաւ մշակուի: Ո՞վ չգիտէ այդ բայց ցաւը հէնց նորա մէջն է, որ այդ եւր մեր մէջ դարերի ընթացքում անգամ չի մշակվում, չի զարգացում, այլ մնում է ու

մնում միշտ նոյն քարացած վիճակի մէջ: Գուցէ ասէք թէ «տգէտ ազգ ենք մենք, դորա համար է» . այդպիսի մի առարկութեան մասամբ միայն կարող եմ «այո» ասել, ըստ որում ուսմիկ հայը, որի նմաններն են կազմում ազգի մեծամասնութիւնը, այնչափ բնական խելք և ընդունակութիւններ ունէ՞ որ, օտարների իսկ ասելով, Փրանսացի կամ գերմանացի ուսմիկից վեր է քան թէ վար, բայց դու եկ տես՝ որ այդ խելացի արարածների մէջ եւր այնչափ ստոր աստիճանի զարգացման վրայ է մնացած, որ եթէ կ'ուզէք մեղրաճանձերն և մըջիւններն անգամ կարող են նոցա հետ մըցիլ, ըստ որում այդ մանրուկ կենդանիներն գիտեն արժանաւոր առաջնորդներ ընտրել և հնազանդիլ նոցա, մինչդեռ հայերս այդ չափն էլ չգիտենք, այլ ամենքս էլ միմեանց հաւասար կ'ուզենք բռնել, էլ չմտածելով թէ այս ինչք տաղանդով կամ փորձառութեամբ շատերից կարող է բարձր լինել, ուստի և շատերին առաջնորդելու արժանաւորութիւն ունենալ: Փոխադարձ յարգ և արժանիք չափելու համար մի այդպիսի չափ չունենք հայերս, այլ մեր չափը սոսկ նա է, որ ամենքն էլ մէկ քիթ, մէկ բերան և երկու աչք ունեն, ուստի և ամենքն էլ հաւասար են, սլըրծաւ գնաց. սա է հայերիս արդեւ և հոգան մարդկային արժանիք չափելու համար, իսկ ուղեղի գերազանցութիւն, իսկ մտաւոր և բարոյական արժանեաց տարբերութիւն անու՛ր չգիտեմ թէ ո՛րչափ կան. մեր մէջ: Հերիք է որ անուանի մէկը մտերմաբար մի քանի անգամ տխմար իմաստակներից մէկի հետ խօսէ, որ նա էլ իր նման և իրան հաւասար մէկը դառնայ իսկոյն, և յանդուգն ու անզգամ ձեւերի և ընթացքի մէջ գտնուի նորա վերաբերմամբ...

Մինչդեռ բոլորովին ուրիշ բան, երբ անուանին օտար մի ազգի մէջ կը դործէ. «նա մեծ է, նա հայութեան պարծանք է», ի նշու, որովհետեւ իր եւր այդ գէտքում այնչափ տկար է և հեռու նորանից, որ ո՛չ հետը կարող է խօսել և ո՛չ էլ հայերէն խօսելով իր հայկական եւր նորա թի դէմ դնել. (հայերէն խօսել և գրելն, ասենք անցողակի, մի պատուհաս է մեր մէջ, որովհետեւ հէնց որ մէկը հայերէն խօսեց իսկոյն նա զինքը հաւասար կը

դունէ այդ լեզվով խօսող բոլոր հայերի
հետ), որովհետեւ նա ոչնչով չի կարող նո-
րան Խաչէիներ անել, ոտի տակ փոս փո-
րել ու իր օրական տալրուստից զրկել...
է՛հ, հերիք է, էլ չխօսենք մեր այս
ԶԶՈՒՆԵԼԻ ԵՍԻ վրայ, որի առթիւ հատոր-
ներ կարելի է գրել և դեռ չվերջացնել,
այլ եզրափակենք այս տողերը նորանով,
որ դո՛ւք յարգելի պարոն Լեւոն Մկըր-
տիչեան, բաւական չարածծի մէկը կ'երե-
ւաք, դիտմամբ շեղուելով խնդրից ու ու-
ղելով ինձ խօսացնել այնպիսի մի ցաւալի

խնդրի վրայ, որն այնչափ մեծ մտահո-
գութեան և նաեւ յուսահատութեան
նիւթ եղած է միշտ մեր ազգային հեղի-
նակների և գործիչների համար, ոկսած
մեր ոսկէ դարից մինչեւ մեր օրերը: Եթէ
այդ է եղել Ծաղիկի մէջ ձեր գրած երկար
գրութեան շարժառիթը, այդ ժամանակ
թոյլ տուէք դիտել ձեզ որ անպէղէ մի կո-
րակ է ձեր այդ գրութիւնը հայր «ես»ի
վրայ:

ԳՐԻԳՈՐ ՆԻԿՈՂՈՍԵԱՆ

Պերա, 23. սեպտ. 1890

Վ Ե Ր Գ Ի Ն Է

Ո Ղ Ո Ր Ա Ս

(RONDEAU)

Վերգինէ՛, վի՛հ մ'ես դու, կի՛ն խորխորատ,
Ուր գըլորեցան իմ քաղցրիկ յոյսեր:
Ծաղկունք կան եզերքդ, այլ ո՛չ անարատ,
Որք թէպէտ փայլին, բուրեն անընդհատ,
Այլ մեղր ու նեկտար՝ երբե՛ք չեն հոսեր:

Թէ չուզեցիր ինձ ընծայել հաւատ,
Մի՛ կարծեր և զիս ոխակալ ու վատ,
Մի՛ յուսար թուք, մուր, մի, մի՛ ըսպասեր:
Վէրք ինէ՛:

Բայց մի՛ ալ կարծեր թէ սրտիկս ազատ
Չունենայ թա՛ռ, բոյն, բանո՛ք ենէ ի դատ,
Թէ իսպառ մարին հոգւոյս փառ լոյսեր,
Հոգւոյս՝ որ գիտէ թէ իւր Տենչքն՝ ու Սէր
Բոլոր քեզ զոհեցն, ո՛հ, քեզ համար շա՛տ
Վեր գին է...:

(1885)

ԱԼՓԱՍԼԱՆ

ՉԵՐՔԷՉՆԵՐՈՒ ԿԵԱՆՔԷՆ

ՉԵՐՔԷՉ

Երբոր Կովկաս այցելող ուղեւորը կ'անցնի Քուպան գետին երկայնութեամբը տարածուող լեռնային երկրէն, տեղ տեղ կը հանդիպի բարձրադիր գիւղերու, արծուի բոյներու պէս այդ սարաւանդներուն վերայ թառած, որոց կոնաձեւ հողածածուկ խոճիթներուն ծայրէն ընտանեկան ճախին ծուխը կը բարձրանայ կ'ողորտանայ, աւելի եւս սաստկացնելով այդ մռայլ վայրերուն մեղամաղձոտութիւնը։ Չէրքէզներու անտառներ, գիւղեր եւ ագոնք, տասնեւհինգի չափ։ Անոնց ներքեւէն, Քուպանը զայրագին միմաւրով կիրճերու մէջէ կը թաւալէ իր անդուսպ փրփրաղէզ կոհակները, ինքը մինակ աննուաճ ու անպարտելի իր եղբորաբնակ ժողովրդեան ընդհանուր քայքայմանն ու անհետացմանը մէջտեղ։

Տասնեւհինգ գիւղ միայն։

Ատենօք, — դեռ ոչ շատ տարիներ առաջ, 1860ին, — այդ լեռներուն վրայ, Քուպան գետին ամբողջ երկայնութեամբը, կը բնակէին իբր 300 000 Չէրքէզ։ Ստուարութիւ խումբերու բաժնուած էին, Ատիկէ, Շապսուհ, Ապաղա, Ապածըխ, որոց յիշատակը միայն մնացած է հիմակ այդ լեռներուն մէջ։ Ժիր ու աշխատասէր ժողովուրդ։ Իրենց ձեռքն էր տեղական արդիւնաբերութիւնը, և ամէն տարի Սեւ ծովու եզերքը, Անաբա կը զրկէին միլիոնաւոր ուռբլի արժողութեամբ իրենց արտադրութիւններն. իւր, պանիր, մեղր, մեղրամոմ, յանջարեղէններ, անասուններ, բուրդ և այլն։

Հիմա, այդ ամբողջ ժողովուրդը ցրուած է։ Ժանա շունչ մը եկած փչած է այդ լեռներուն վրայէն, մահարեր շունչ մը, որ իր կարած անցած վայրերուն վրայ թողած է աւեր և ամայութիւն։ Ոմանք տարագրուած մեծ մասը գաղթած, շատերը փճացած, այդ տասնեւհինգ գիւղերը միայն կը մնան կանգուն, նախնի փառաց յիշատակն յաւերժացնելով։ Ռուս կառավարութիւնը պակասածներուն տեղ բերած լեցուցած է իսպախներ, որոնք Չէրքէզներուն նախալետական առաքինի կեանքով և կտրիճ վեհանձնութեամբը սրբացած

այդ վայրերուն մէջ կը պարզեն հիմա իրենց դող ու խարդախ ունակութիւններն և սիֆիլիսով վարակուած մարմինները։

Այդ վայրերը սակայն ի՞նչ դէպքերու ականատես եղած են։ Հոն մէն մի քարը, մէն մի ծործորը, մէն մի լեռանցամէջն, ունի իր պատմութիւնն, արեան տառերով գրուած։ Այդ վայրերու մէջ մղուած է հսկայական պայքար մը քառորդ դարէն աւելի, հաւատար կատաղութեամբ, Ռուսերը միշտ յաղթուելով և աւելի ստուար զօրութեամբ նորէն յարձակելով, Չէրքէզները միշտ նոյն անվեհեր արութեամբ պաշտպանելով իրենց լեռներն։ Ահաւոր ու ահարկու կռիւ, որ Ռուսներէն կորցած է այնչափ կեանք ու զոհողութիւն, իսկ Չէրքէզներէն՝ անկանգնելի անկում և քայքայում։

Այդ կռիւներուն մէջ, ի՞նչ քաջագործութիւններ Չէրքէզներուն կողմանէ։ Հատորներ կարելի է լեցնել այդ քառորդ դարու պատերազմին արիական դրուագներով։ Իւրաքանչիւր Չէրքէզ, հերոս մըն է եղած։ Եթէ այդ պատմութիւնը գրուէր, անցքերու և արկածներու ծանօթութենէ մը աւելի՝ հոյակապ գիւցազներգութեան մը ըլլար, ուր վսեմը պիտի տիրապետէր յար, խիզախ արութեան և ասպետական վեհանձնութեան հետ խառն։

Այդ գիւցազներգութիւնը սակայն, եթէ չէ գրուած, բերնէ բերան կը զրուցուի Կովկասի մէջ, միշտ վառ ու կենդանի պահելով անոնց անկորնչելի յիշատակը։ Այդ պատերազմաշունչ դրուագներէն մէկ քանին ինձի ալ պատմուեցան, և ես անոնց մէջէն ընտրութիւն մը ընելով Մախի ընթերցողներուն համար, կ'առնում անոնք միայն որք ամէնէն աւելի կը պատկերեն Չէրքէզին բնածին վեհանձնութիւնն և արութիւնը։

1854ին, ռուս բանակը եկած գրաւած է Քուպանի նահանգն, ընդ հրամանատարութեամբ Կուխարկնքօ զօրավարին։ Երբ Ռուսի զօրավար մըն է սա արի մարդ, որ Չէրքէզներուն մէջ իսկ մեծ յարգ ու համարում կը վայելէ իբր ճշմարտ, կտրիճ։ Չէրքէզները շատ դժգոհ են սակայն ուրիշ

ուսու զօրավարէ մը, գեներալ Սաքնի-
ուստի իրենց մէջէն վեց հոգիի պաշտօն կը
յանձնեն որ երթան զօրավար Սաքնին ա-
ռեւանդեն։ Նշանակուած Չէրքէզները
ճամբայ կ'ելլեն մութ գիշեր մը։ Հազար
դժուարութիւններէ անցնելով, կը հաս-
նին ուսու բանակետողը, հրամանատարին
կայքը պաշտպանող խազախները կ'սպան-
նեն, և կ'առեւանգեն ուսու զօրավարը։
Այդ Չէրքէզները յայտնապէս չէին ճանչ-
նար զօրավար Սաքնին, որովհետեւ իրենց
առեւանգած զինուորականը Սաքնին չէ,
այլ կուխարէնքօն։ Առանց թամբի ձիու
մը վրայ կը նստեցնեն զայն, և ոտքերն
ալ ձիուն փորին կը կապեն որպէսզի հեծ-
եալը վար չլինայ։ Ճամբորդութիւնը տա-
ժանելի է լեռներուն մէջ։ Վերջապէս ի-
րենց թանկագին աւարովը կը հասնին
աւաւը։ Հոն սխալումն երեւան կ'ելլէ։
Չէրքէզ պետերն, որք կը ճանչնային կու-
խարէնքօն, անմիջապէս ձիէն վար կ'առ-
նուն զայն, կը տանին հանդէպներու, մեծ
պատուով ու յարգանքով կը դարմանեն,
և երբ երեք օր յետոյ ուսու զօրավարը բա-
ւական կը կազդուրի իր դժնդակ ուղեւոր-
ութեան միջոցին կրած տառապանքնե-
րէն, լուր կը զրկեն Ռուսներուն որ գան
այն ինչ տեղն ետ անուն իրենց հրամա-
նատարը, յայտնելով թէ «Մենք կը յար-
գենք ու կը սիրենք զինքն իբր թէ՛ մարդ,
և չենք ուզեր երբեք որ անոր պէս արի
մարդ մը մեր դաշոյնովը մեռնի մեր գիւ-
ղին մէջ»։

Այդ կռիւներուն մէջ, Ռուսներն ի-
րենց տիրած կէտերուն վրայ աջալուրջ
հսկողութիւն ի գործ կը դնէին, յանկար-
ծակիի չգալու համար։ Իրարմէ կէս կէս
ժամ հեռաւորութեամբ, յառաջապահ
փոքրիկ պահակախմբեր հաստատած էին
խազախներու, որք իրենց հողաչէն խոր
ճիթներու մէջ անդուլ կը հսկէին։

Ձմեռն եկած է արդէն։ ցուրտը նաս-
տիկ է, քար ճաթեցնելու աստիճան։ Խա-
զախներու պահակախումբ մը, Քուպանի
եզերքը սարի մը վրայ հաստատած իր
կայքը, խրճիթին մէջ ճարձատուն կրակին
առջեւ կը տաքցնեն իրենց դողդղացող
մարմինը։ Լուսթիւնը կը տիրէ այդ ամե-
հի լեռներուն մէջ, շնչաւորներու լու-

թիւնը միայն։ զի հովը խուլ ձայնով կ'ու-
նայ անդուլ այդ լեռանցամէջներու ար-
ճագանդին մէջ, տիեզերական ոլորի մը
հանդուհուկ, ձիւնի կոյտերը քշելով աւ-
լելով իր առջեւէն և յիմար ճարտարապե-
տի մը պէս խօլական շէնքեր կանգնելով
դէս ու դէն։ Խազախները կը թմրին հե-
տըզհետէ։ Ի՛նչ լաւ է հանգիստն այդ
կրակին քով։ մինչ դուրսը հովը մոլեգ-
նաբար կը թաւալէ իր սառուցիկ յորձանք-
ներն։ Ամէնքն ալ կը փաթթուին իրենց
վերարկուներուն մէջ և կրակին բոլորտիք
կը փռուին։ Իրենց մէջէն ծեր խազախ մը
միայն, որ երկար փորձառութեամբ գիտէ
թէ Չէրքէզներուն հետ կարելի չէ հա-
շուով գործել, թող կուտայ իր ընկերնե-
րուն քնանալ, ինքն եւս գետնին վրայ կը
տարածուի, աչքերը կը գոցէ, բայց ա-
ռանց ննջելու։

Հանգիստակայ եզերքին վրայ, ժայռի
մը ետեւէն, Չէրքէզը կ'սպասէ ակնդէտ։
Կամաց կամաց սողալով, կը հասնի գե-
տին եզերքն, և կը դիտէ գիմացի պահա-
կախումբը։ Իր ոտքերուն ներքեւ, Քու-
պանը սառուցի բարակ խաւով մը ծած-
կուած է։ Հազուադէպ կը հանէ և քովը
կը դնէ, ու իր դաշոյնը ակռայներուն մէջ
առած, գետը կը նետուի։ Սառուցը կը
խորտակուի ջարդափշուր։ Պաղ ջրին մէջ
որ իր անդամները կը կարկամէ, սառուցի
սուր և բարակ կտորներուն դէմ որք իր
մարմինը կը ծակոտեն, Չէրքէզը յուսա-
հատի մը մոլեգնութեամբ կը լողայ և կը
հասնի վերջապէս միւս եզերքն։ Անդամ-
ներն ընդարձացած են, և սակայն լեռն
ի վեր կ'ելլէ, խրճիթին ետեւը կ'անցնի,
և տանիքին վրայէն տարապայման դգու-
շութեամբ սողանով, խրճիթին դրանը առ-
ջեւ կ'իջնէ։ Հինգ խազախները փռուած
են հոն անշարժ։ Չէրքէզը վայրագ նա-
յուածք մը կը նետէ անոնց վրայ, անկա-
րող կատաղութեան նայուածք մը, զի ան-
դամներն այնպէս սառած են ու այնչափ
կը դողդղան որ չկրնար դաշոյնը բերնէն
առնուլ ու գործածել։ Կամաց կամաց կրա-
կին կը մօտենայ և բոլոր մարմնովը կը
ծռի անոր վրայ, կրակն իր մսին փակչե-
լու աստիճան։ Իր անդամները քիչ քիչ
կ'սկսին կորսնցնել իրենց ընդարձացումն
և իրենց ճապուկ թեթեւութիւնը վերս-

տանալ: Ծերունի խաղախն, որ չէ քնացած, այդ միջոցին աչքերը կը բանայ թեթեւ շշուկէ մը, ու ի տես Չէրքէզին սարսափահար, նորէն կը փակէ: Մինչեւ որ հրացանն առնու և բլթակը քաշէ, կը հասկնայ թէ իր դործը կը լիննայ: Իր ընկերները բարձրաձայն կը խորդան: Ծերունին, իբր թէ քունին մէջ դառնալով, իր հրացանին վրայ կը տեղափոխուի. եթէ սակայն բլթակը քաշէ, անոր ձայնը կըրնայ մահաբեր ըլլալ իրեն: Կամայ մը իր վերարկուն ներքեւ կ'առնու բլթակն և անոր ծալքին մէջ կը խեղդէ բլթակին ճարձատիւնը: Չէրքէզն արգէն գտած է իր առագոծթիւնը և հազիւ իր հասակը կը շտկէ, գնտակը կուգայ իր սիրտը կը մխուի: Լեռնականը կը ցնցուի, այլ իր բոլոր ուժն ամփոփելով գերազոյն ճգի մը մէջ, դաշոյնովը կ'սպաննէ երեք խաղախներ և գետին կ'իյնայ ուժասպառ անկենդան, իր արեամբը կարմիր ներկելով ձիւնի սպիտակ մակերեւոյթը:

Այդ արի ժողովրդեան բարքերուն վըրայ զնդարձակ ուսումնասիրութիւն մը շատ հեռունները կրնայ տանիլ մեզ: Անոր արիական զգացումները միայն ուղեցի նիւթ ընել յօգուածիս, և կարճեմ կրցի փոքր ի շատէ գալարար մը տալ: Չէրքէզներուն համար այդ արութիւնը՝ անհրաժեշտ պայման է իրենց գոյութեան: Երիտասարդ մը, մինչեւ որ կռուի մը մէջ վերք չստանայ, նշանակութիւն չունենար իրեններուն քով և չկրնար ամուսնանալ:

Ռուսներն ամէնէն առաջ զգացած են այդ լեռնականներուն սրտին վայրենավետ յատկութիւններն: Անոնց դէմ կռուող զօրականներէն մին, Մարլինքի բանաստեղծը, կռուի մը մէջ բռնուելէ և ուրիշ չէրքէզ գերիներու հետ փոխանակուելով ազատ թողուելէ ետքը, ա'լ քէն ու առելութիւն չկրնար պահել անոնց դէմ, իր արուեստագէտի խանդավառութեամբն հրապուրուած անոնց վեհանձնութենէն ու արութենէն, և իր բազմաթիւ գրուածքներուն մէջ ամէնէն եռանդուն ջատագովն եղած է Չէրքէզներուն: Իրմէ յետոյ ուրիշ ռուս զօրական մը, Լէրմոնթով բանաստեղծը, անմահ տաղերու մէջ

երգած է Չէրքէզներուն կեանքը: Իր Հուշեր, որուն գեղեցիկ թարգմանութիւնը Փանոսեանի ձեռքով Մասի ի մէջ լոյս տեսաւ, մուցուած չէ՝ անշուշտ ընթերցողներէն: Լէրմոնթով երգած է նաեւ ուրիշ շատ չէրքէզ գիւցագներ, Հաճի Ապրէք, Պէզպուլաթ, և այլն: Այլ իր բանաստեղծութեանց մէջ ամէնէն սրտառու չն և ազդեական է ապահովապէս այն քերթուածն որուն վերնագիրն է Մըշէթ, այսինքն «Նորընծայ» վանականը: Ահաւասիկ քերթուածին նիւթը.

Ռուսները կը յափշտակեն մանուկ Չէրքէզ մը և կը տանին կը յանձնեն զայն ռուս վանք մը: Վանահայրն իր յատուկ խնամքներուն տակ կ'առնէ մանուկն և կը կրթէ զայն եկեղեցական պատուիրանաց ու կրօնային դաստիարակութեան մէջ: Տարիները կ'անցնին: Մանուկն հիմա առագագեղ երիտասարդ մըն է գարձած, որուն խորունկ աշուրներուն մէջ սակայն մերթ ընդ մերթ կը վառի ժառանգական անդուստ կըքերուն յիմարական կրակը: Տխուր և ինքն իր վրայ ամփոփուած երիտասարդ մըն է, որ իր ընկերներուն ընկերութենէն կը փախչի, աչքը ժամերով յառած կովկասեան լեռներուն, որք երկնից մակերեւոյթին վրայ կը պարզեն իրենց սեպածեւ կատարները: Օր մը, Չէրքէզն ա'լ վանքին մէջ չէ. փախած է իր հայրենի աշուր դառնալու, որուն յիշատակը անքակտելի դրոշմուած է իր մըտքին մէջ և անկից հեռու անցուած երկար տարիներուն հակառակ՝ անեղծ մնացած: Չէրքէզը կը փախչի արագընթաց, և շնչառապառ ու ուժաթափ կը հասնի վերջապէս գետի ափունքը: Կանգ կ'առնու այնտեղ: Եւ ահա յանկարծ անտառին մէջէն յովազ մը դուրս կ'ելլէ, պահ մը կը դիտէ երիտասարդն, և մէկ ոտտումով կը յարձակի անոր վրայ, ճանկերն արգէն անոր կուրծքին մխած: Չէրքէզը փայտ մը առած է ձեռքը. ու այդ գերազոյն ճգնաժամին մէջ իր բոլոր ուժը գտած, մինչ յովազն արգէն բացած է իր կլափը՝ փայտըն անոր կոկորդիճ մէջ կը մխէ, երեք շանդամ կը դարձնէ, և անկենդան գետին կը փռէ գաղանը: Այլ արիւնը կը հոսի առատօրէն իր վերքերէն, և նուաղեալ գետին կ'իյնայ:

Այդ միջոցին, վաճառքն էլ հասնին կուգան, և զինքը վաճառք էլ փոխադրեն, վաճառակարն, անոր մահճին քովը նստած, գգուական ձայնով էլ հարցնէ հիւանդին երբ ու վերջապէս էլ բանայ աչուընները. «Ա՛հ, ինչո՞ւ թողուցիր փախար մեր քովէն: Մեր քովը, Աստուծոյ տաճարին մէջ կը թուելով, արքայութեան արժանի պիտի ըլլայիր, մինչդեռ աշխարհական կեանքին կորստաբեր ճանապարհներուն մէջ, դացիր կորսուելու: Աստուծոյ արքայութիւնը քեզ կ'սպասէր մեր քովը, ինչո՞ւ հեռացար մեր քովէն:»

Հիւանդը վեր կ'առնուէ իր աչուընները, և սկսար ձայնով մը որ արդէն մահաշունչ կերպով էր դողդոջայ, էր մրմնջէ. «Ինծի ինչ պէտք է քու արքայութիւնդ և ամպերէ վեր այն երկնային օթեւանն, ուր չկան մեր լեռներն և քարաժայռերը: չկան վայրի գաղաններն որոց դէմ մարդ կռուելով միայն կարող է ստանալ քաջի առնուն. ուր չկան սեւաջեայ գեղուհիներ որոց համար ամէն կտրիճի սիրտը պատրաստ է կուրծք կուրծքի կռուի մէջ տաննեակ թշնամիներու գլուխները կը տրելով և անոնց ոտքը նետելով՝ սիրտ դըրաւել: Ի՞նչ ընեմ ես այն արքայութիւնն ուր չկան այս բաները:»

Հիմակ, բան մը չէ մնացած ասոնցմէ: Քուսանի լեռներուն մէջ, տասնեւհինգ աս-ններուն ծխանը միայն էր միայն: Ինչպէս հրդեհէն յետոյ հովը կ'առնէ չորս կողմ էր ցրուէ աճիւնները, հիւսիսային ահեղամուռնչ հով մըն ալ տարողնեց ցրուեցայդ քառորդ դարու հրդեհին մնացորդները: Քուսանը միայն կիրճերու մէջէ էր թաւալէ իր անզուտ փոփրադէզ կոհակները, մշտնջենական բողոքի մը պէս զայրադին մրմնաւով, ինքը մինակ աննուաճ ու անպարտելի՝ իր եղբորաբնակ ժողովրդեան ընդհանուր քայքայմանն ու անհետացմանը մէջտեղ:

ԼԵՒՈՆ ԲԱՇԱԼԵԱՆ

ՍԵՆԵԱԿԸ

Սենեակս է յար նըման հոգւոյս,
Ինչպէս մահուան նըման է քուն.
Հընոցին մէջ՝ չի՛ք բոց ու լոյս,
Պատուհանն ալ՝ չի՛ք շաղ այգուն:

Ծածկըւած են՝ պատերն ողջոյն
Թղթով մը դորշ ու ողբալի,
Ուր՝ փեղկերու կանաչագոյն
Ըստուերն՝ իբր աղտ էր ծաւալի:

Մըռայլ մահճիս գլխուն վերեւ
Կայ քաղցրադէմ՝ Յիտուս մ'առ կախ,
Որ շուքին մէջ կ'ծկի՝ իբրեւ
Թէ՛ մերկ՝ ըզգար ամօթ կամ վախ:

Յղկեալ ու շէկ, ջախջախ մի գանկ,
— Կենացս ընկերն հոգեգործ —
Վառարանիս վըրայէն ցանգ
Ինձ նայի իւր զոյգ ծակերով...:

Հոստ վարագոյրք հընանքիար՝
Խոր անկողնոյս շուրջ դաւարին.
Ձեզունն ալ՝ դարչ որդեր երկար՝
Սողան, սարեն մէջ խաւարին:

Ժամացոյցս երբ հնչէ ժամ,
Սհարեկիչ հանէ մի ձայն
Ոյր խուլ թնդիւնն, ամէն անգամ,
Կը հեկեկայ երկա՛յն երկայն:

Եւ մահաբոյր սիրոյս հրեշտակ,
Որ սեւ գլխակ էր կըրէ միշտ,
Մըթ ու թեան մէջ, մերձ ի դաշնակ,
Կը հեծեծէ յերգ դառնալիշտ:

Կահը ու ծաղիւնք, պատկերք ու գիրք,
Դըժոխք և թոյն էր հստին ժանտ,
Եւ զիս սիրող Սոսկումն ալ՝ գիրգ
Իբրեւ պատան՝ պատէ այս բանտ:

— Տըխտ'եր սենեակ, ուր հեղնալիր
Ձանձրոյթն ընկերս է ցայդ և տիւ,
Պատիւ վերա՛յ տողեմ այս՝ գիր,
Սեւ յարկդ օրհնեմ բոլոր սրտիւ:

Քանզի սիրէ հեղեղն ըզմիհ,
Բուն ալ՝ գիշերք թուխ վերարկու,
Քա՛ղցր ես սրտիս — որ էր ցաւի —
Նըմանութեամբդ իսկ ահարկու:

ՄՕՐԻՍ ՌՕԼԻԻՆԱ

Թարգմ.

ԱԼՓԱՍԼԱՆ

ՊԱՆԴՈՒԽՏԻ ԿԵԱՆՔԷՆ

ՃԱՄԲՈՐԴՆԵՐ . — ՀՈՂԷ ԾՐԱՐՆԵՐ

Ներսը... ներսն ենք: Թանձր ու դառամ պատեր կը բաժնեն զմեզ աշխարհէ. նեղ սենեկի մը կամարը կը ճուշտ գիւս Բարեկամք ծանօթք եկած են՝ վերջին անգամ տեսնելու իրենց սիրելիներն որք վաղիւ կը մեկնին դէպի հայրենի աշխարհ: Իւրաքանչիւր մէյմէկ յանձնարարութիւն կ'ընէ. — Մօրս երկու ձեռքերը կը համբուրեմ, ըսէ որ հոգ չընէ, Աստուծով դաւ տարի ճամբայ կ'ելնեմ: — Պապիս ձերմակ միրուքը պա՛գ և ըսէ՝ մեր տունը որ շատ հոգ չընեն, քիչ առենէն կը դառնամ, օրերս եկան հասան, աշխատելու ալ կարող չեմ առջի պէս: — Ամեն աշնան, այս դարձի, ուրախութեան և նոր ցաւոց եղանակին, քիչ կամ շատ տարբերութեամբ այս ըզմակաթ հառաչանքները կ'ընեն կը թափին խաներու միջին կամարներուն տակ: Կան խնդրուածքներ, կարօտակէզ, անձուկներ, որ անուշահոտ բուրմանց պէս, վեր կ'ընեն և ընդունելի կ'ըլլան, և սակայն կան ալ, որ քառուցիկ մարմիններու հետ կ'երթան դէպի Պալլադու, այդ անկուշտ և սովալլուկ վայրն, և հոն, քահանային միմունջներուն հետ, կը տարուին հովէն, կը տարուին մահուան փոթորկէն՝ գետինը թափած դեղին դաւիա-հար տերեւներուն պէս:

Յանձնարարութիւնք կը վերջանան, բաւերէ աւելի լուիկ դէմքերը կը խօսին ձեռքերու վրայ ծռած. վերջին անգամ կը փարին իրարու, արցունքն ալ կը տեսնես խաշած կողերու վրայ ինկած: Ասունք այն մարդիկ են, զոր բարեգութ յօդուածագիր մը իր Տնտեսականին մէջ անբաններուն կարգը դրած էր: Իրաւ է, իբրեւ անբան կը տառապին տան ու զաւկի սիրով, իբրեւ գրաստ տարիներով փաթ-թուած կեցած են սեւ հողերու, ժանգոտած քարերու, ծառերու և խարխուլ շէնքերու, իբրեւ անբան կը մաշին պարտքերուն բեռը սիրով շալակած: Եւ կը քնէինք այդ անբաններուն մէջ, կամ որ աւելի ճիշդն է ըսել՝ կը փորձէինք քնելու: Վերը

պանդուխտ, վարը պանդուխտ, դիմացը պանդուխտ, մէկ քով պանդուխտ. աշխարհ մը կար աչքի առջեւ, վշտերու, տառապանքի աշխարհ մը, զոր քունն իր թեւերուն մէջ կը փաթթէր անշուշտ լուծեամբ:

Առաւօտուն կը մեկնինք ողջ երթ մաղթելով մեր բարեկամներուն, որք երեկոյին Տրապիզոնի շողեհաւը պիտի նստին, և կը քալէինք տրամագին... Պանդուխտը խանի մէջ ապրելու է միայն, հոն ամեն բան դուրսեցի է. մթնոլորտին մէջ թռնաւոր օդ մը կայ որ պանդուխտին կեանքն իսկ է, անոր հետ խառն են տան ու զաւկի սէր, ծնողի և հարազատներու գործը: Տառապանքն ալ մեծ գործ կը տեսնէ: Ամէն անգամ որ մոտած ու ելած եմ այդ գարշահոտ մթնոլորտին մէջ, միշտ նորոգուած գտած եմ ինքզինքս. տարիներով մեռցուած զգացումներ մարմին կ'առնուն, ելեւէջներ կ'ընեն կուրծքիդ տակ: Եւ ահամայ կը խորհիս որ, լուսէ, մոտաւոր կրթութենէն զուրկ այդ «անբաններն» են, որ այսօր քանդուածոց ու մոխիրներու մէջ պատմական կեանք մը կը մշտնջենաւորեն. իսկ մեք, որ անոնց կարգէն դուրս ելանք, գիրք, գրիչ, թուղթ ու մելան առինք, յօդուածագիրն բանաւորաց կարգն անցանք, կուրէն փախչող վաքոգի դատաւիքները չեղա՞նք: Ի՞նչ, մեծ չէ՞ այն բեռնակիրը որ տառապանքն ետեւը թողած, երեկոյին Տրապիզոնի շողեհաւը կը նստի և կ'անցնի փոթորկէն ու ծովէն, կեանքի սիրով, կեանք տանելու յուսով: Երբ տեսնեմ երեկոյին ձեր շողեհաւը, որ իր գոռոզ գլուխը դէպի Սեւ ծով դարձուցած՝ իր չչակով հրաժեշտի ողջոյնը կ'որոտացնէ՝ մեր եզերաց վըրայ, ճնշուած հառաչանքի մը ազդողակաւ կ'ըսենք, թէ Ահա անբաններ որ իրենց թշնամագիր քառու յօդուածագրէն շատ աւելի վեր են: Լուս, եթէ այդ «անբանները», «գրաստները» ամենքն ալ մեզի պէս հաշուող բանաւորաց կարգը մտնէին, տուն ու դուռ փակէին յաւիտեան, կին ու զաւակ մոռնային, այսօր դատարկութիւն միայն կը գտնէինք մեր ապառաժներուն ստորոտը, ուր երկրին ժամանակակից կաղնոյն հետ սկսած է կեանքը: Գայէք: Սիրելի աղբարներ, պատմութիւ-

նը ձերն է. ձեր ցնցոտին, մաշած կուրծքը շատ աւելի կ'արժեն... Սեւ ծովը թող իր երեսը չը խոժոռէ ձեր առջեւ. խնդուծիւն տարէք ձեր զաւկներուն, կեանք տարէք ապագածներուն և ձիւնեղէն լեռանց ոտքերուն տակ:

Երանի անոր որ այս դարձին՝ հօր, զաւկի և կամ սիրելագունի մը կորուստը չթողուր իր ետեւ: Գերեզմանները կեանքեր են սրոց հետ ներքին կապակցութիւն մը ունին մարդիկ: Դրսեցի կին մը, որ յատկապէս տուն տեղ թողլով՝ հոս եկած էր իր ցաւագար ամուսնիը խնամելու, զայն թաղելէ ետքը, չկրնար յանձն առնուլ իր երկիրը դառնալ, թէպէտեւ իր հայրենակիցք շատ ֆանքեր և համոզումներ ի գործ դնեն: Ընդ երկար գաղտնիքն անծանօթ կը մնայ: Կինը սովորութիւն ըրած է եղբոր ստէպ այցելութեան երթալ իր ամուսնոյն գերեզմանն ու հոն արցունքներով սիրտուիլ: Ոչ ոք գիտցած է զայս, և երբ օր մը կ'ստիպեն որ իր խոստովանութիւնն ընէ քահանային առջեւ, կինը փոփոխուած կը հառաչէ. «Ա՛հ, որով թողում գերեզմանը», ու կուլայ սրտագին... Այդ այրին տակաւին կը մնայ հոս, և ոչ ոք իրեններէն կը յանդգնի ըսել թէ հայրենիք զրկենք քեզի: Ուրիշ այրի մը, նոյն և նման դժբաղդութեան մէջ, մեկնելէ մէկ օր առաջ կը գտնեն իր սիրականին գերեզմանին վրայ: Կը դիտեն հեռուէն, կը տեսնեն որ հէքը, վերջին համբուրէն ու արցունքներէն ետքը, հողէ ծրար մը կը շինէ ու կը գետեղէ խնամով կուրծքին վրայ: Ի՛նչ պիտի ընես, եղկելի դու: Կը պահէ սիրով սրտին ու հոգւոյն վրայ, ինչպէս հինները կը պահէին մեռելաց անձիւնը սրբարաններու մէջ. մասնաւոր ժամերու պիտի հանէ պիտի քակէ ծրարն ու հոտուրտայ ինչպէս մայր մը իր մանկիկն՝ դգուանաց վայրկեաններուն մէջ: Այո՛, տեսեր եմ, ոսկւոյ ծրարներէ աւելի գերեզմանաց հողերու՝ ծրարներ կը տարուին: Մայրեր են որք խնդրած են զայնս: Տարէք, այդ ծրարներն ալ տարէք. մի՛ զըրկէք տառապեալ ծնողներ, սիրելիներ իրենց զաւկներու ու սիրելիներու ցաւագին սիրտանքներէն: Մաքստոտանց պաշտօնեայք տակաւին բան մը հասկցած չեն այդ հողէ ծրարներէ, այսուհետեւ ալ չը պիտի հասկնան. մէկը «գրաստ» պիտի կոչէ զձեզ, միւսը յիմար, այլ ոք տըխմար, և այսպէս անհասկնալի պիտի մնաք:

ՀՐԱՆԴ

ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Իրիկուն մը, երկաշն, երկաշն և ամայի ճամբու մը վրայ երկու կիներ իրարու հանդիպեցան. մին Արեւելքէն կուգար, միւսն Արեւմուտքէն. այն որ արշալուսոյ կողմէն կուգար պառաւ մըն էր չորացած, կքած և դողդոջուն. միւսն որ մեկնած էր վերջալուսոյ աշխարհէն աղջիկ մըն էր, թափառ գեղեցիկ:

Երբ իրարու դէմ ելան, կանգ առին և դիտեցին զիրար, և յանկարծ երկուքն ալ զարմացման ճիչ մը արձակեցին:

Ու պառաւն ըսաւ. «Ի՛նչ», դո՛ւն ես, քոյր իմ Տրտմութիւնն»:

Եւ մանկամարդ աղջիկն ըսաւ. «Քոյր իմ, Ուրախութիւնն, դո՛ւն ես»:

Այո՛, Ուրախութիւնն էր, այդ խո՛նջ, այդ մահամէրձ կինը որ ցուպի մը վրայ յեցած՝ դժուարաւ կը քալէր: Թափած ու ձերմկցած մազերն հազիւ կրնային երկու խեղճ պզտիկ հիւսքեր կազմել որոնք իր վախտ կանակէն վար կը կախուէն. լայն խորշոմներ կը պեղէին իր ճակատն որուն երկու քովերը կը գալարուէին քներոց երակները տոգոյն ու դանդաղաշարժ, կիսամեռ որդերու պէս. աչքերը մութ ու փոսացեալ կողիւններուն խորէն կը պլպլէլային նուազ կապոյտով մը, աշնջափ նուազ որ ցամքած լճակներ կը յիշեցէին. այսերը ճմրթկած քուրջերու պէս կնճռոտած էին ու սեւցած, և թմթմկած առարկան չրթոնքը երկու մաշած թաւշի կտորներու զգայութիւնը կուտային: Իր հագած պատառատուն և ազտոտ ձորձերուն տակ ազազուն մարմնիկ մը մնացած էր, և ծակծկած արմուկներէն միւսը կ'երեւէր, չորցած, թուամած միս մը: Զեռնքերն ու ծունդերը կը դողդղային ախտամոլ մարդոց անդամներուն պէս, և իր ոտքերը, խոշորցած, տափակցած, ազտոտած այդ ոտքերը, բոպիկ էին...:

Տրտմութիւնը նայուածք մը նետեց անոր վրայ որուն մէջ արհամարհանք կը կարդացուէր խառն արդահատանքով. «Ի՛նչ հակապատկեր, կ'ըսէր անշուշտ մեռնէն, իմ և այս ողորմելի աքնաբանին միջեւ»:

Եւ արդարեւ գեղեցիկ էր ինք, իր բարձր ու լեցուն հասակով կոհակի մը պէս ուռած իր լանջով, և ուռենիոյ տերեւոց նման ուսերն ի վայր կախուած առատ ու թուխ մազերով. գիշերածաղկանց պսակ մը կը բոլորէր իր ճակատն որ դարնան երկնքի մը պէս մաքուր էր ու սպիտակ. այնչափ «սեւ էին» իր աչքերն և անոնց տկնարկն «այնչափ խոր որ անյատակ քարայրներու վրայ բացուած երկու լուսամուտներ կը թուէին, և իր մորթը հասուն թարմութիւնն ունէր այն պտուղներուն զորս ամառն ոսկեգոծած է. սեւ չղարշէ պատմութեան մը իր լայն ուսերէն կ'իյնար մինչեւ իր ոտքերն և իր միջին թափանցիկութեան մէջէն ընդ աղօտ կը ցուցնէր կաթնաթոյր մարմնոյ մը փափուկ ռախտակութիւնը:

— Սյոգ ի՞նչ վիճակի մէջ կը տեսնեմ զքեզ, քոյր իմ, ըսաւ Տրամութիւնը. ո՞վ խեց քենէ այն ձօն հրապոյրներն որով երբեմն կը պանծայիր. ո՞վ զքեզ այդպէս տուռապեցուց...

Ուրախութիւնը հառաչեց և ըսաւ.

— Ա՛յս, թէ որ գիտնայիր ինչէ՛ր անցան իմ գլխէս, թէ որ խմանայիր բոլոր այն աղէտներն որոնք մաշեցուցին զիս, պիտի լայի՛ր իմ վրաս, քո՛յր իմ:

Եւ ձեռք ձեռքի բռնած, դնացին նըստան ճամբուն եղեւթքը բարձրացող հովանաւոր ծառերէն միոյն տակ: Եւ ահա ինչ որ ըսաւ այն ատեն խեղճ Ուրախութիւնը.

— Ո՛հ, աւյոյս չկայ, ալ այս աշխարհն իմ առջեւ գոցուած է, մարդիկ ա՛լ չեն սիրեր զիս... Ատեն մը, երբ աղուոր խաբտեալ մազերս ճառագայթներու խութի մը պէս ուսերս ի վայր կախած, կ'անցնէի մահկանացուած ամբոխին մէջէն, իմ նայուածքներս զանոնք կը մոգէին, և մէկ ժպիտս բաւական էր զանոնք իմ ոտիցս տակ խոնարհեցնելու. ո՛հ, այն ատենք երկատարդ ու հրապուրիչ կին մըն էի, և երկատարդ էր աշխարհս ալ, եւ մարդոց սրտերն ալ երկատարդ էին. քչնչութեանէն դեռ նոր դուրս ելած տիեզերքը կը շողալար իր թարմ գեղեցկութեան մէջ, ամեն բան նոր կը փթթէր, նոր կը փայլէր, նոր կը հոսէր, նոր կը թռչէր, եւ ամեն բան քաղց էր ու մեծ, զուարթ էր ու պայծառ... ո՛հ, կը յիշե՞ս այն ատենը, քո՛յր իմ:

— Շա՛տ քիչ, պայտասխանեց Տրամութիւնը, երազի մը պէս, ևս այն ատեն պզտիկ աննշան աղջիկ մըն էի հիւանդոտ ու աղագուն, և մարդոց քովէն անցած ատենս, կից մը կը զարնէին կռնակիս ու կը հեռանային. արդէն քիչ անգամ դուրս կ'ելնէի իմ խրճիթէս, որովհետեւ կը վախնայի այն հսկայ դադաններէն որոնք քալած ատեննին շարժուն լեռներ կը թուէին և երբ մռնչէին, կարծես իրենց թռքերուն մէջ ամբողջ ովկէան մը կը գոռար. այն ի՛նչ ահագին ծառեր կային այն ատեն, բարձրաբերձ ու թաւ ծառեր որոնք իրենց մազոտ կատարով երկինքը կարծես կը ծակէին, երկի՛նքն, որուն կապոյտն այնչափ ջինջ էր և այնչափ անարատ, որ այդ դոյնն անոր տալու համար Աստուած անոր մէջ մանկամարդ աղջկանց աչքեր հալեցուցած ըլլալու էր: Այնպէս փայլուն գոյներով և այնպէս մեծ թիթեռնիկներ օդին մէջ կը թռչէին, այնպէս սաստիկ հոտերով և այնպէս վիթխարի ծաղիկներ դաշտերուն մէջ կը փթթէին, այնպէս պայծառ կը շողար արեւն և այնպէս կիզիչ ջերմութիւն մը կը հեղուր, որ առողջութիւնս կը վնասուէր երբ դուրսը շատ մնայի. աչքերս այդչափ փայլէ կը զոչոտէին, հոտերը կը նուաղեցնէին զիս, և տաքութիւնը զիս կը խորովէր. սակայն ինչ որ ամենէն աւելի կը տանջէր զիս, մարդոց արհամարհանքն էր:

— Բայց ի՞նչպէս կ'ուղես որ սիրէին զքեզ, ընդմիջեց Ուրախութիւնն, անցեցելոյն յիշատակովն ոգեւորուած, այն մարդիկն որոնք զիրենք չըմպատող բնութեան պէս հսկայ էին և եռանդուն. անոնց տաք կուրծքին վրայ, անոնց ջղուտ լայն բազուկներուն մէջ, անոնց պղնձէ շրթունքներուն տակ, պիտի խղուէիր, պիտի ճղմուէիր դուն, քու այն ատենուան տխրած մարմնովդ, ու մըլուխի ողորմելի ուժովդ: Մարդիկ զի՛ս կը սիրէին, որովհետեւ ես իմ վրաս կը միացնէի ինչ որ բնութիւնն ունէր ամենէն աւելի մեծ, ամենէն աւելի փայլուն և ամենէն աւելի ներդաշնակ. աստղերն իմ աչքերուս կը նախանձէին. արշալոյսը կը շիկնէր երբ կը տեսնէի իմ այտերս: մազերս ոսկեհիւս թիկնոցի մը պէս կռնակէս վար կ'իյնային մինչեւ ոտքերս, իմ լանջս սպիտակ էր

չուշաններուն մորթին պէս; և մարմինս այնպէս բոյր մը կ'արձակէր որ վարդերը զիս իրենցմէ կը կարծէին: Երբ այդչափ գեղով պճնուած, կ'երթայի մարդոց երեւիլ, իմ ժպտովս անոնց հոգին կը լնուի, և բոլոր ճակատներն իմ առջեւս կը խոնարհէին, և կը բացուէին ինձ բոլոր սրբտերը:

— Բայց ի՞նչպէս իշխու, քոյր իմ, որ այդ ամենը կորսնցուցիր, ընդմիջեց չարածի Տրամուսթիւնը, այնպէս նայուածքով մը որ սուր էր օձի մը լեզուին պէս. ո՞ր թողուցիր այդչափ դանձ, այդչափ հրապոյր:

— Ա՛յն գիտես ի՞նչպէս դառն է, սիրելիս, երջանկութեան օրերուն յիշատակներէն անցնիլ աղէտներուն պատմութեան. դարեր ու դարեր թաւալեցան ծիրանագգաց ամառներուն, մուշտակաւոր ձմեռներն յաջորդեցին, երկինքն ամպերով իր կապոյտ լանջն սքօղեց. հսկայ և հրեղէն բնութիւնը պաղեցաւ, մթնցաւ, պզտիկացաւ, և մարդը՝ անդունդներու, լեռներու, անտառներու կեանքը թողլով փայտէ յարկի մը տակ կձկտեցաւ: Ես միշտ նոյնն էի մնացած, միշտ գեղեցիկ, միշտ թարմ, սակայն սկսայ նշմարել որ իշխանութիւնս տակաւ կը կորսնցնէի մարդոց վրայ. առն՞ք ալ փոխուած էին. անոնք որ միւսնոյն կեանքը կ'ապրէին առաջ ամենքն ալ նոյն պայմաններուն տակ, ամենքն ալ բնութեան հարապատ գտակներ, ամենքն ալ որսորդ, խաշնարած, վրանաբնակ, ամենքն ալ հաւատարմապէս երջանիկ, սկիւսան տակաւ դասերու բաժնուիլ. ոմանք գանձերու մէջ թաղուեցան, այլք մնացին մերկ ու նօթի. ոմանք սակի ձեղուններուն տակ յափրացան, այլք խրճիթներու ցուրտ տախտակներուն վրայ տուայտեցան. մարդիկ հետզհետէ հեռացան բնութենէն, սկսան արհամարհել անտառներն՝ իրենց եղբայրներն, և անոնց պարզ, համարձակ, անխարդախ կեանքը. տիեզերաց գերադոյն էակը, արարչութեան թագաւորը կոչեցին իրենք. զիրենք, և ինչպէս մեղուներն իրենց բջիջներուն մէջ, անոնք փակուեցան իրենց խուցերուն մէջ և սկսան իրենց ուղեղը փորել գաղանիքներ յերեւան հանելու, խնդիրներ լուծելու, իրաց սկիզբն ու վախճանը գտնելու:

Համար, և որչափ որ իրենց միտքը կը չարչարէին, այնչափ իրենց մարմինը՝ կը ծլւրէր, այնչափ իրենց սիրտը կը խամրէր, և այնչափ ինձմէ կը հեռանային, հետեւելու համար չուղքորթ, շատախօս կնկան մը զոր Քաղաքակրթութիւն կը կոչէին. այդ կարճատես ու կարճահասակ, տափակ քիթով ու հաստ սրունքներով թանձրազանգուած այդ կինը եկաւ բազմեցաւ մարդկութեան դանկին վրայ և կիցով մը զիս վաճակեց: Գահէս ինկած, վարկս կորսնցուցած, քիզոցները մնացած էի, լքեա՛լ, անպաշտպա՛ն մութացկանի մը պէս. այն ատեն սկսան ծաղրել զիս և անարգել. երբ կ'երթայի անոնց խուցը մտնել, և գիրքերու, թուղթերու, գործիքներու, մեքենայներու զարչելի քառի մը մէջէն անցնելով անոնց կը մօտենայի, ցուրտ քրքիջ մը երեսիս կը նետէին ու կ'ըսէին. «Գնա՛, օղային ուրուական, գնա մենէ հեռու, ալ չէ՛ս կրնար խտրել զմեզ. վաղանցուկ ստուեր մը, երա՛զ մը, նախապաշարու՛մ մըն ես դու, լո՛յսը ծագեցաւ աշխարհիս վրայ, շրջմոլիկ հօրերն ալ չեն կրնար փայլիլ: Գնա՛...» Եւ կը հեռանայի արատուելով... Այս արհամարհանքը, այս ցրտութիւնը զիս կը տանջէին. ես միշտ կը սիրէի մարդկութիւնը, նոյն իսկ իր ապեր. խոտ անհատատարմութեան մէջ, և քանի որ կը տեսնէի զայն արտասուօք ողորդուած և վհատութեան տակ կքած, կը արտմէի... Եւ այդպէս կորսնցուցի իմ գեղեցկութիւնս. հետզհետէ նիհարացայ ու տժգունեցայ, և լիճերուն մէջ, որք երբեմն կը հպարտանային իմ նրբակերտ ցոլացնելով երբ կ'երթայի դէմքըս դիտել, ալ ինքզինքս չէի ճանչնար... Բաւական չհամարելով զիս վաճակել իրենց տուններէն, ոմանք սկսան հրապարակաւ զիս հալածել և այսպէս, փիլիսոփայ մը ելաւ հայհոյեց իմ անունս և զիս չարիք մը անուանեց մարդկութեան: Ուրիշ մը առաջարկեց սպաննել զիս իրբու հրանոլորիչ խտրեաց մը: Բանաստեղծ մը երկա՛յն ոտանաւորներ գրեց որոց մէջ կատաղաբար կ'անիծէր զիս իրբու իր թշուառութեան միակ պատճառը: Այդ հալածանքներուն մէջ էր որ կորսնցուցի մաղբուս ոսկին, այտերուս վարդը և լանջաց ծիւները: Գիշեր կ'ըլլար որ դուրսը, քարե-

րուն վրայ, անօթի եւ մերկ կ'անցնէին երբեմն երբեմն հազիւ մէկը կը հրաւիրէր զիս իր տունը, այն ալ իրր սպասուհի, եւ աւելի դառն էր ինձ համար երթալ ծառայել անսիրտ էակներու քան թափառական պաղտիլ, որովհետեւ կոշտ մարդիկ էին որ կը քաշէին կը տանէին զիս իրրեւ անարգ խառնակեաց, մոլի մարդիկ որք իրենց հեշտութեանց նախազաւ կը դնէին զիս, կամ արծաթասէր մարդիկ որք իրենց ոսկիներուն դէզին վրայ կը նետէին զիս, կամ պճնամոլներ որք իրենց զարդասէսէին մէջ կը թիւմէին զիս. աւա՛ղ, ոչ ոք ինձ իր սիրտը կը բանար, եւ այս էր որ զիս կը տառապեցնէր...

Լուե՛ց, թշուա՛ռ Ուրախութիւնը. երկու խոշոր արցունքներ թարթիչներէն կախուեցան, յետոյ աւելցուց դառնութեամբ.

«Ներէ՛, քոյր իմ, թէ որ չեմ կրնար ցաւս զսպել. կրած տանջանքներուս յիշատակը չգիտես ինչպէս կ'արիւնէ սիրտըս... ալ բա՛ւ է որքան խօսեցայ... դո՛ւն ալ քիչ մը պատմէ կեանքդ. այնպէս կ'երեւի որ ինձմէ շատ աւելի բազմաւոր եղած ես դու»

— Ես շատ բան չունիմ պատմելու, ըսաւ Տրամութիւնը. կը բաւէ ըսել թէ ինձ պատահեցաւ ճիշդ հակառակը քու պատմածիդ. որչափ որ դարերն հալովեցան, եւ որչափ մարդիկ հեռացան իրենց նախնական կեանքէն, այնչափ աւելի համակրանք դուայ անոնցմէ. նախ տեսակ մը տոգոյն էակներ որոնք ցնցոտիներ կը հազնէին եւ որոնք քնարի մը վրայ իրենց յուզումները կ'երգէին, բայց ինձ իրենց թեւերն եւ իրենց ցուրտ ճակատն իմ համարոյններուս ընծայեցին: Ապա սիրեցին զիս բոլոր անոնք որ մարդկային սանդուղին ստորնագոյն աստիճանին վրայ կեցած էին, բոլոր անժառանգ, բոլոր ասերջանիկ, բոլոր լքեալ անձերը զորս ճակած էր ընկերութիւնը. եւ դողդոջուն հոգիներու, արտասուող էակներու բազմաթիւ գունդ մը սկսաւ հետեւիլ իմ քայլերուս եւ զիս պաշտել իրրեւ դիցուհի մը: Քաջալերուած այդչափ ընդունելութենէ, աւելի համարձակութիւն առի, եւ սկսայ ամեն տան մէջ մտնել, եւ տեսայ որ ոչ ոք կը վանէր զիս. գնացի դիտունին եւ

անոր քրտնաթոր ճակտին վրայ արցունք մը կաթեցուցի, եւ դիտունը թաղծութեամբ դնէց՝ «Աւա՛ղ, թողուկներ, ենք մենք արարչութեան մէջ, հիւլէներ անհունութեան մէջ...»: Գնացի փիլիսոփային եւ ձեռքս անոր ուսին վրայ դրի. թեւերը ծալեց փիլիսոփայն եւ մրմնջեց՝ «Ունայնութիւն, ունայնութիւն...» Հետզհետէ բազմացան երկրպագուներս, եւ այդչափ գգուանաց, այդչափ գուրգուրանաց մէջ մարմինս կաղդուրեցաւ, աճեցաւ, գեղեցկացաւ. եկաւ ատեն մը որ ալ եւս ոչ ոք սոսկումս զգաց ինձմէ, եւ հիմայ նայուածքս ամենէն խորոտ մահկանացուներն իսկ կարող է նուաճել:

— Հրճուէ՛, քոյր իմ, ըսաւ Ուրախութիւնը դառն հառաչով մը, իրաւունք ունիս, ատեն մը մարդոց սրտին ես էի թագուհին, այսօր քու ձեռքդ է մահանը...: Գնա՛, քոյր իմ, գնա վայելել մարդոց պատիւներն ու վայելանքը. ա՛լ կարող չեմ ես անոնց մօտենալ, որովհետեւ շա՛տ նախատեցին, շա՛տ քարկծեցին զիս...: Ալ ինձ համար չէ՛ այս աշխարհը...: Լաւ է որ մեկնիմ անկից, հեռաւոր ամայութեան մը մէջ իմ դժբաղդութեանս վրայ երթամ արտասուեմ: Մնա՛ս բարեաւ, քոյր իմ. յաղթանակի ժամերուդ մէջ յիշէ՛ զիս...: Կը մաղթեմ որ քու տիրապետութիւնդ աւելի տեսական ըլլայ: Մնա՛ս բարեաւ...»

Ուրի ելաւ Ուրախութիւնը իր դողդոջուն ձեռքով Տրամութեան ուսին յենլով, եւ անոր անխորշոմ ճակտին վրայ իր թուամած չրթներով տիտէր, շատ տիտէր համարոյր մը դրոշմելէ վերջ, ճամբայ ելաւ յամրաքայլ:

Եւ երկու կիները շարունակեցին իրենց ուղեւորութիւնը, Տրամութիւնը մէկ կողմ, Ուրախութիւնը միւս կողմ:

ՖԱՆԹԱՅԻՕ

Արտօնատէր

Կ. Ս. ԻԻԹԻԽՆԱՆ